ԵԴ2/8886/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«28» հունիսի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանը (այսուհետ՝ Դատարան), քննարկելով «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերության՝ Հանձնաժողովի թիվ 2.1 Արձանագրությունը անվավեր ճանաչելու՝ «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության հայտը Ընթացակարգի հրավերի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու որոշման մասով՝ որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչելով թիվ 2.2 Արձանագրությունում Ընթացակարգի հրավերի 2-րդ և 3-րդ չափաբաժիններում այլ անձնաց ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Հայցադիմումը դատարանի գրասենյակ է մուտքագրվել 22.06.2023թ., իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 23.06.2023թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում

է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերությունից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերությունը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գ.Գ.Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերությունից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «ԼՃԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. «Լուսաբաց Ճամբար» Առողջարարական ՍՊ ընկերությունը իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ